



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
artamet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2021 թվական N 23

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքակառավարման մասին>>
Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 17-րդ
հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արտամետ համայնքի ավագանու 11.05.2021թ.-ի N 3 նիստի օրակարգը՝
համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդհունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ 4

Դեմ -

Ձեռնպահ -

ԱՄԻՐԻՄԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՍՈՅԱՆ ՌԻՍՈՒԲ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. Համայնքի ավագանու N 3 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Արտամետ համայնքում հողի սեփականատեր <<Մոդերն Այգի>> ՍՊԸ-ին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
3. Արտամետ համայնքի բնակավայրի տարածքում գտնվող տնամերձ հողամասարը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
4. Արտամետի համայնքի սեփականություն հանդիսացող 29,204 հա հողատարածքների աճուրդային կարգով օտարելու մասին:
5. Արտամետ համայնքի նախկին կիսակառույց գազատարի խողովակների, հենասյուների ապամոնտաժման, գույքագրման, գնահատման և վաճառքի մասին:
6. Արտամետի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գնահատման հաշվետվության և աճուրդով օտարելու մասին:
7. Արտամետ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկաները և սարքավորումները ուղակի վաճառելու մասին:
8. Արտամետ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդային կարգով օտարելու կանոնակարգը հաստատելու մասին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
artamet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2021 թվականի N 24

ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ <<ՄՈՂԵՐՆ ԱՅԳԻ>> ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների և Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 22.04.2021 թվականի N 91 եզրակացությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. << Արմավիրի մարզի Արտամետ համայնքի վարչական տարածքում գտնվող <<Մողերն Այգի >> ՍՊԸ-ին պատկանող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխել՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարի կողմից ապահովել նպատակային նշանակության փոփոխությունից առաջացած տարբերության վճարների գանձումները՝ օրենքով սահմանված կարգին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆՂԱՄՆԵՐ՝

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՄԻՐԻԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՍՈՅԱՆ ՌԻՍՈՒԲ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 11-ի N 24 ՊՐՈՇՄԱՆ

**ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ՄՈՂԵՐՆ ԱՅԳԻ >>
ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ**

1. ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի վարչական տարածքում գտնվող իրավաբանական անձ <<Մոլերն Այգի >> ՍՊԸ-ին պատկանող 04-022-0115-0001 ծածկարգով 41 հա',որից 36 հա կորիզավոր և 5 հա վարելահող,որից 1.472563 հա հողատարածքը փոխադրել ջրային հողերի կատեգորիա (ջրամաբար կառուցելու նպատակով):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
artamet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2021 թվականի N 25

ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԱՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հաշվի առնելով այն հանգամանքը որ նշված հողատարածքները երբևէ ոչ մի քաղաքացու սեփականություն չեն հանդիսացել.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Արտամետ համայնքի բնակավայրի տարածքում գտնվող տնամերձ հողամասարը ճանաչել որպես համայնքային սեփականություն համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՄԻՐԻՍԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՍՈՅԱՆ ՈՒՍՈՒԲ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ

1. 04-022-0006-0003 ծածկագրով 0.12177 հա տնամերձ հողամաս, Արաբոյի փողոց թիվ 24 հասցե:
2. 04-022-0006-0004 ծածկագրով 0.1265 հա տնամերձ հողամաս, Արաբոյի փողոց թիվ 26 հասցե:
3. 04-022-0006-0005 ծածկագրով 0.12103 հա տնամերձ հողամաս, Արաբոյի փողոց թիվ 28 հասցե:
4. 04-022-0006-0006 ծածկագրով 0.12113 հա տնամերձ հողամաս, Արաբոյի փողոց թիվ 30 հասցե:
5. 04-022-0010-0001 ծածկագրով 0.12080 հա տնամերձ հողամաս, Արաբոյի փողոց թիվ 32 հասցե:
6. 04-022-0010-0002 ծածկագրով 0.12058 հա տնամերձ հողամաս, Արաբոյի փողոց թիվ 34 հասցե:
7. 04-022-0010-0003 ծածկագրով 0.12074 հա տնամերձ հողամաս, Արաբոյի փողոց թիվ 36 հասցե:
8. 04-022-0010-0004 ծածկագրով 0.12163 հա տնամերձ հողամաս, Արաբոյի փողոց թիվ 38 հասցե:
9. 04-022-0010-0005 ծածկագրով 0.12126 հա տնամերձ հողամաս, Արաբոյի փողոց թիվ 40 հասցե:
10. 04-022-0011-0001 ծածկագրով 0.12041 հա տնամերձ հողամաս, Արաբոյի փողոց թիվ 44 հասցե:
11. 04-022-0011-0004 ծածկագրով 0.11465 հա տնամերձ հողամաս, Արաբոյի փողոց թիվ 50 հասցե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
artamet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2021 թվականի N 26

ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 29,204 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՆԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արտամետ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Թույլատրել աճուրդային կարգով օտարել Արտամետ համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը:
 - 04-022-0101-0049 ծածկագրով 3-րդ կարգի վարելահող 4.9 հա:
 - 04-022-0119-0050 ծածկագրով 3-րդ կարգի վարելահող 0.4475 հա:
 - 04-022-0005-0043 ծածկագրով 5-րդ կարգի գյուղ. նշ. հողատարածք 0.30274 հա:
 - 04-022-0102-0043 ծածկագրով 5-րդ կարգի գյուղ. նշ. հողատարածք 2.93306 հա:
 - 04-022-0001-0001 ծածկագրով 5-րդ կարգի գյուղ. նշ. արոտ 19.143 հա:
 - 04-022-0124-0017 ծածկագրով 5-րդ կարգի գյուղ. նշ. այլ 0.2643 հա:
 - 04-022-0122-0010 ծածկագրով գյուղ. այլ հողատեսք 1.207 հա:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՄԻՐԻԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՍՈՅԱՆ ՈՒՍՈՒՔ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
artamet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2021 թվականի N 27

ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԿԻՆ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԳԱԶԱՏԱՐԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ, ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ, ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ և ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի
18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Արտամետ համայնքի ղեկավարի
առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Թույլատրել Արտամետ համայնքի սեփականություն հանդիսացող նախկին կիսակառույց
գազատարի ապամոնտաժումը, գույքագրումը, գնահատումը և վաճառքը իրականացնել
օրենքով սահմանված կարգով:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՄԻՐԻՍԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՍՈՅԱՆ ՈՒՍՈՒԲ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
artamet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2021 թվականի N 28

ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ և ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով և <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արտամետ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Հաստատել Արտամետ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գնահատման հաշվետվությունը համաձայն հավելվածի:
- Թույլատրել Արտամետ համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով կազմակերպել նշված գույքի աճուրդային կարգով օտարումը համաձայն հավելված 4-ի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՄԻՐԻԿԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՍՈՅԱՆ ՌԻՍՈՒԲ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 11-ի N 28 ՈՐՈՇՄԱՆ

1. Լոտ .1 <<Զիլ ՄՍԶ 4502>>ա/մ,ապակոմպլեկտավորված,մեկնարկային գինը՝ 336 000 ՀՀ դրամ:
2. Լոտ .2 <<Կ-701>> տրակտոր, թողարկման տարեթիվը-1984,մեկնարկային գինը՝ 1 200 000 ՀՀ դրամ:
3. Լոտ .3 <<Խոտինձիչ E-302>> անիվավոր տրակտոր,մեկնարկային գինը՝ 2 580 000 ՀՀ դրամ:
4. Լոտ .4 <<Կ-701>> տրակտոր, թողարկման տարեթիվը-1985,մեկնարկային գինը՝1 600 000 ՀՀ դրամ:
5. Լոտ .5 <<ՅՕ-2621 B-3>> էքսկավատոր, թողարկման տարեթիվը-1992,մեկնարկային գինը՝ 1 326 000 ՀՀ դրամ:
6. Լոտ .6 <<Կամազ-5511>> բեռնատար,թողարկման տարեթիվը-1985,մեկնարկային գինը՝ 1 700 000 ՀՀ դրամ:
7. Լոտ .7 <<Կամազ-5511>> բեռնատար, թողարկման տարեթիվը-1987,մեկնարկային գինը՝2 500 000 ՀՀ դրամ:
8. Լոտ .8 << ՎԱԶ 21213 >> մարդատար, թողարկման տարեթիվը-2004,մեկնարկային գինը՝ 452 000 ՀՀ դրամ:
9. Լոտ .9 << S-170 >> թրթուրավոր տրակտոր, մեկնարկային գինը՝ 2 100 000 ՀՀ դրամ:
10. Լոտ .10 << Ռիրալ 4320 >> բեռնատար,թողարկման տարեթիվը-1985,մեկնարկային գինը՝1 1995 000 ՀՀ դրամ:
11. Լոտ .11 << ԶԻԼ ՄՍԶ-554 >> բեռնատար, ապակոմպլեկտավորված,մեկնարկային գինը՝ 220 000 ՀՀ դրամ:
12. Լոտ .12 <<ԿԱՎԶ 327>>մարդատար ավտոբուս ապակոմպլեկտավորված 408 000 ՀՀ դրամ
13. Լոտ .13 <<Լաֆետ, կցասայլ, Զիլ>>ա/մ,մեկնարկային գինը՝ 180 000 ՀՀ դրամ:
14. Լոտ .14 <<Հավաքող հակավորող մեքենա>>,մեկնարկային գինը՝144 000 ՀՀ դրամ:
15. Լոտ .15 <<Ռեխնիկոն փխրիչ>>,մեկնարկային գինը՝ 450 000 ՀՀ դրամ:
16. Լոտ .16 <<Կցասայլ մետաղյա Կ-701 տրակտորի>>,մեկնարկային գինը՝ 460 000 ՀՀ դրամ:
17. Լոտ .17 << Գութան Կ-701 տրակտորի>>,մեկնարկային գինը՝ 120 000 ՀՀ դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
artamet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2021 թվականի N 29

ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԸ և ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետերով և հիմք ընդունելով Արտամետ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկու տարի շարունակ Արտամետ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական սարքավորումները աճուրդային կարգով չեն վաճառվել և ոչ մի անգամ ձեռք բերման հայտեր չեն ներկայացվել համայնքի ավագանին թույլատրում է կատարել նշված գույքի ուղղակի վաճառքը՝ համաձայն հավելվածի :
- Թույլատրել Արտամետ համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով կազմակերպել նշված գույքի օտարումը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՄԻՐԻՍԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՍՈՅԱՆ ՈՒՍՈՒԲ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ

1. <<Հավաքող հակավորող մեքենա>> արժեքը 144 000 ՀՀ դրամ:
2. <<Սերմագտիչ Կ-531/1>> արժեքը 226 748 ՀՀ դրամ:
3. <<Կ-701 տրակտորի գույքան>> արժեքը 72 000 ՀՀ դրամ:
4. <<Խոտհնձիչ>> արժեքը 46 400 ՀՀ դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտամետ համայնք
artamet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2021 թվականի N 30

ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆ.ԴԻՄԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի պահանջներով և իրնք ընդունելով Արտամետ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արտամետ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդային կարգով օտարելու կանոնակարգը համաձայն հավելվածի:
2. Թույլատրել Արտամետ համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով կազմակերպել նշված գույքի աճուրդային կարգով օտարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՄԻՐԻՄԱՆՅԱՆ ԱԶՆԻՎ

ՀԱՄՈՅԱՆ ՈՒՍՈՒՔ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵԼՔՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՏՈՆԱԿԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՆԱՇԻՏ ԴԱՎԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՑԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդների կազմակերպումն ու իրականացումը, որոնք բխում են ՀՀ Քաղաքացիական ու Հողային օրենսգրքերի և «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի դրույթներից:
2. Աճուրդների կազմակերպիչը համայնքի ղեկավարն է, որն իր որոշմամբ ստեղծում է համապատասխան հանձնաժողով:
3. Հանձնաժողովն որոշումներ է ընդունում ծայների պարզ մեծամասնությամբ:
4. Հանձնաժողովը գլխավորում է Արտմանտ համայնքի ղեկավարը:
5. Կազմակերպիչն աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակում է սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, նախավճարը, քայլի չափը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կյուլուր, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ նաև դակական հատվանիշները), ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերմիտուտների) առկայությունը:
6. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի աճուրդի մասին հետևյալ տեղեկությունները.

- 1) աճուրդի կայացման տարին, ամսաթիվը և ժամը.
- 2) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը).
- 3) աճուրդի կազմակերպման վայրը (հասցեն).
- 4) աճուրդի ձևը և անցկացման կարգը.
- 5) աճուրդի պայմանները, այդ թվում՝ լուտի (լուտերի) անվանումը, լուտի նկատմամբ սահմանափակումները, լուտի մեկնարկային գինը, նախավճարը և քայլի չափը.
- 6) աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.
 - ա) հայտ,
 - բ) աճուրդի մասնակցության համար սահմանված վճարի անդորրագիր,
 - գ) անձնագիր, իրավաբանական անձանց համար հիմնադիր փաստաթղթեր (գրանցման վկայական, կանոնադրություն, ՀՎՀՀ),

դ) տեղեկանք համայնքի ղեկավարի աշխատակազմից համայնքի բյուջեի նկատմամբ պարտքեր չունենալու վերաբերյալ:

- 7) աճուրդում հաղթողին որոշելու կարգը:
- 8) կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները:
- 9) լուտն ուտումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը:
- 10) ընդհանուր աճուրդի դեպքում՝ լուտի վաճառքի հերթականությունը:
- 11) աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը:
- Աճուրդի կանոնակարգը տրամադրելու համար պահանջվում է միայն կանոնակարգի պատճենահանման համար կատարած ծախսերը:

7. Հրապարակային ծանուցման փոփոխություն կատարվում է սույն կանոնակարգով, ինչ կարգով կատարվել է հրապարակային ծանուցումը:

8. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության համար սահմանված չափով վճարի անդորրագիր և անձնագիր: Աճուրդի մասնակցության հայտը չի ընդունվում, եթե հայտ ներկայացնողը սույն օրենսգրքով սահմանված հողամասի սեփականության իրավունքի սուբյեկտ չէ:

9. Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք նախավճարը վճարում են տվյալ գույքի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, և նրանց տրվում է մասնակցի վկայական, ինչպես նաև աճուրդի մասնակցության վճար, որը տվյալ տարվա համար սահմանում է համայնքի ավագանին՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ որպես մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար: Աճուրդի դրված գույքի քայլի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, և սակարկողը կարող է գինն ավելացնել քայլի չափից ոչ պակաս գումարով:

10. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում են աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ: Աճուրդն անցկացվում է բաց, որին մասնակցում են հանձնաժողովի անդամները, ինչպես նաև գրանցված անձինք և աճուրդի մասնակից չհամարվող անձինք: Գրանցված անձինք սահմանված կարգով վճարում են մուտքի վճար, որի չափը չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը, և աճուրդը սկսվելու պահից 30 րոպե առաջ աճուրդային հանձնաժողովի կողմից գրանցվել են: Աճուրդի մասնակից չհամարվող անձինք աճուրդի գործընթացին մասնակցում են դիտորդի կարգավիճակով:

11. Աճուրդն սկսվելու պահից դադարեցվում է մտնելն արգելվում է:

12. Աճուրդն սկսվում է, եթե սակարկողների թիվը մեկ կամ ավելի է

13. Աճուրդի կայացման ժամանակ պահպանվում է ծանուցման մեջ նշված լուտերի վաճառքի հերթականությունը:

14. Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ:

15. Եթե լուրջ չի վաճառվում, այդ թվում՝ ոչ մի գնորդ չներկայանալու դեպքում, ինչպես նաև եթե հաղթող ճանաչված անձը և (կամ) աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունն ստորագրելուց, ապա տվյալ լուրի վերաբերյալ աճուրդը համարվում է չկայացած: Աճուրդը չկայացած համարվելու դեպքում հաջորդ աճուրդի պայմանները, այդ թվում՝ մեկնարկային գինը, կարող են փոփոխվել:
16. Լուրի վերաբերյալ աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն դատական կարգով: Լուրի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչվելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության: Աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում նոր աճուրդը կազմակերպվում և անցկացվում է նույն կարգով: Լուրի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում նոր աճուրդի պայմանները կարող են փոփոխվել, եթե աճուրդի անվավերությունը կապված է եղել նախնական որևէ պայմանի հետ, ինչպես նաև եթե տեղի է ունեցել լուրի վիճակի փոփոխություն, այդ թվում՝ կապված դրա վերաբերյալ իրավունքների և պարտականությունների փոփոխման:
17. Նախքան աճուրդի սկսվելը կազմակերպիչը գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված փաստաթղթերը: Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լուրի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լուրի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լուրը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը, նվազագույն հավելման չափով՝ մեկնարկային գնի 5%: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացած մասնակիցը աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակիցը: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներակայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներակայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին: Լուրի (լուրերի) վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը և տվյալ լուրի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:
18. Աճուրդն սկսելու պահից երեսուն րոպե առաջ կազմակերպիչը հնարավորություն է ընձեռնում մասնակիցներին ծանոթանալու աճուրդի կանոնակարգին՝ մասնակիցների համար հասանելի տեղում կանոնակարգը փակցնելու միջոցով:
19. Առաջին անգամ աճուրդը չկայանալու դեպքում երկրորդ աճուրդը կազմակերպվում և անցկացվում է նույն կարգով ու ժամկետներում, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդի, որն անցկացվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվության հրապարակայնությունը: Ձուլաքանչյուր սակարկության արդյունքով կազմվում է առանձին արձանագրություն, որն իր մեջ ներառում է տվյալներ՝ աճուրդի անցկացման վայրի, ժամկետի, մասնակիցների և կազմակերպչի, սակարկման ընթացքի և արդյունքների մասին:
20. Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:
21. Եթե աճուրդը չի կայանում երկրորդ անգամ, ապա հողամասը կարող է օտարվել ուղղակի վաճառքով՝ սահմանված մեկնարկային գնով: Ուղղակի վաճառքի դեպքում գնման նախապատվություն ունեն տվյալ համայնքի բնակիչները:

22. Աճուրդի արձանագրությունն ստորագրում են աճուրդային հանձնաժողովի անդամները, աճուրդում հաղթող ճանաչված անձը, ցանկության դեպքում՝ աճուրդի մյուս մասնակիցները: Արձանագրությունը և աճուրդի փաստաթղթերի փաթեթը պահպանում է Արտամետրի համայնքապետարանը

Աճուրդի արդյունքների մասին արձանագրության մեջ նշվում են՝

- 1) աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և ժամանակը.
- 2) լոտի անվանումը, լոտի վերաբերյալ իրավունքներն ու պարտականությունները և այլ սահմանափակումներ, ինչպես նաև լոտի վիճակը.
- 3) լոտի մեկնարկային գինը.
- 4) աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը) և գտնվելու վայրը.
- 5) հաղթող ճանաչված մասնակցի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.
- 6) լոտի գնման գինը.

Եթե հաղթող ճանաչված մասնակիցն արձանագրության վերաբերյալ առարկություններ ունի, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

Ընդհանուր աճուրդի դեպքում արձանագրությունը կարող է կազմվել սակարկությունների ընթացքում: Լոտն աճուրդում վաճառելուց հետո տվյալ լոտի նկատմամբ հաղթող ճանաչված մասնակիցը իրավիճակում է արձանագրությունն ստորագրելու:

23. Աճուրդում հաղթած և հողամասը գնելուց իրաժարված անձի կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում: Նա գրկվում է նաև տվյալ հողամասն ուղղակի վաճառքով գնելու իրավունքից:

24. Աճուրդի չկայացման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:

25. Աճուրդում հաղթած անձը 10 օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը: Եթե նշված ժամկետում գինը չի վճարվում, ապա հաղթող է ճանաչվում սակարկությունների ընթացքում երկրորդ առավելագույն գին առաջարկած անձը, որը նույնպես պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել այդ գումարը:

26. Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո երկու օրվա ընթացքում, կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման: